

տուե՞նք զանձն իմ եղիցի ի վերայ անձին սորա՝ թէ՛ ի մահ եւ թէ՛ ի կապանս եւ ի տանջանս. եւ զամենայն եւ եւ մուտ կացից եւ զնացից իմոց նորին կամաւ կալ եւ մնալ որքան ի մարմնի եմ, եւ թէ ստերիւրեալ խեղցեմ ի սիրոյ նորին ծառայութենէ՝ ընդ ուխտադրութեանս տաղանցան կրիցեմ ըզգատապարտութիւնն ի Քրիստոսէ Աստուծոյ Մերոյ:» (ՍԻՄՆ 1933 Մայիս էջ 151-153):

Իմ կողմէ՛ ոեւէ՛ յաւելումի կարիք չկայ ցոյց տալու համար որ այդ ատելալատ եւ սաստկակիրք օրերուն, երբ միջոցի կը գիմուէր հակառակորդը նեղելու, Ոնոփրիոսի նման մէկը կրնար անսանձ կերպով ստայօղ ամբաստանութիւններով հարուածել ջանալ իր հակառակորդը՝ Յակոբ Զուղայեցին: Գրութիւնը ինքնին խմբադրուած եւ պատրաստուած է երուսաղէմ եւ ոչ թէ էջմիածին, ինչպէս ցոյց կը տրուի թուղթին սկիզբը: Ի՞նչ չափով եղիազար Այնթապցին մասնակից էր այս նամակին պատրաստութեան մէջ, բնական է չենք գիտեր եւ կարելոր չէ գիտնալը, սակայն այս թուղթով արդէն քակուած կը զբոսնենք կծիկը Յակոբ Զուղայեցիի մասին հերքելուած հէքեաթին, իբր թէ Հռոմ փախչելու, Հայկական ազատագրութիւնը հետապնդելու, զոմն (կամ իր Մանուէլ եղբորորդին) Հայոց թաղաւոր օծելու, եւայլն եւայլն, որոնց արձագանգը իր ժամանակակից հայերու կամ օտարներու մօտ ալ արձագանգ գտեր է ու տարածուեր թէ երկրին մէջ եւ թէ եւրոպայ նոյնիսկ բախտախնդիր Իսրայէլ Օրիէ իսկ շահագործուեր է: Ինչ որ ապշեցուցիչ է այն է սակայն որ այս արտառոց հեքեաթին համար ոչ իսկ փոքրիկ տուեալ մը հասեր է մեզի, որ հաւանական դարձնէր այս ենթադրութիւնը, որ Յակոբ Զուղայեցիի երգուեալ եւ մատնութեան առջեւ իսկ չընկրկող թշնամիները հիւսած էին առանց ակնկալելու որ իրենց օրով անհաւատալի այս ստութիւնը իր ոստայնին մէջ պիտի բռնէր մեր օրերուն բազմաթիւ աշխարհական եւ կրօնական մեծ ու փոքր պատմագէտներ, Պատրիարքներէ սկսեալ մինչեւ համբաւեալ Աղաղեմականներ:

Հոս անմիջապէս կ'ուզեմ շեշտել, որ այս քննական աշխատութեան նպատակը միայն Յակոբ Զուղայեցիի ժամանակակից նոր նիւթեր կամ հին նիւթերը քննութեամբ ներկայացնել է, եւ ոչ թէ իրմէ շատ վերջ եւ մինչեւ մեր օրերը քաշքշուած կարճ ու երկար ըսի ըսաները եւ անսահման երեւակայութեան ճախրանքները քննել, քննադատել, պարզել, ճշգրտել կամ հաստատել է: Նման դործ մը կատարել, վատնուած աշխատանք պիտի ըլլայ եւ պիտի խլէ թանկագին ու հսկայական ժամանակ ու միջոցներ: Վերջապէս մեր մօտ ալ օր մը պատմութիւնը այնքան պիտի զարգանայ, որ պիտի կարենայ ըմբռնել ապացոյցին կարեւորութիւնը եւ իր քննական անշիջանելի հուրով ու անկողմնակալութեամբ պատմաքննութեան գիտական խորոյկին վերայ պիտի այրէ մտացածին հերիւրանքները որոնք խութերու պէս մեր պատմութեան մաքուր հոսանքը կ'արգիլեն:

Հակառակ Յակոբ Զուղայեցիի դէմ այս սանձարձակ թշնամութեան ան Կ. Պոլսէն նամակ մը կը գրէ եղիազարին ջանալով բառնալ թշնամութիւնը եւ հաշտութեան եզր մը գտնել: Յակոբ Զուղայեցիի նկարագիրը ցոյց տալու համար աւելորդ չենք սեպեր այդ նամակը հոս արտատպել: Նամակը ժամանակին հրատարակած էր Մեսրոպ Պատրիարք Նշանեան ՍԻՄՆի Յունիս 1941 թուին մէջ էջ 157-158:

«Յիսուսի Քրիստոսի ծառայ Յակոբ կաթողիկոս ամենայն Հայոց, եւ պատրիարք Վաղարշապատու... (եւայլն)...: Եւ ընդ սիրալրական եւ ողջունական նամակիս՝ գիտութիւն լիցի խոհեմութեանդ, զի ըստ ընտրութեան գրոց սրբոց եւ ըստ մարդկութեան յառաջարկութեանց մտաց իմաստնոցն՝ դովելի է ներ նկատումն իրի վախճանակի, յորոց մանաւանդ Սողոմոնին է մեզ յատկապէս առնելի՝ թէ Իմաստութիւն յելս ճանապարհաց դովի. զնոյն առեալ մեր մտածութեամբ յաղաղս կատարօնական պատճառին այնորիկ, ի տեղի իջման Միածնի: